

Նոր կորոնավիրուսը և Միջազգային մարդասիրական իրավունքը

Նոր կորոնավիրուսը պատերազմող երկրների համար զգալի վտանգ է ներկայացնում: Միջազգային մարդասիրական իրավունքը (ՄՄԻ) իրավական այն հիմքն է, որը զինված հակամարտություններից տուժած բնակչության համար կենսական երաշխիքներ է տրամադրում: Այս ակնարկը ամփոփում է ՄՄԻ որոշ հիմնադրույթներ, որոնք հատկապես արդիական են նոր կորոնավիրուսի համավարակի ժամանակ:

Բժշկական անձնակազմ, հաստատություններ և փոխադրամիջոցներ



Նոր կորոնավիրուսի բռնկմամբ առաջ եկած կարիքները ցույց տվեցին, որ լայնածավալ բժշկական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ են համապատասխան բժշկական անձնակազմով և սարքավորումներով համալրված հիվանդանոցներ: ՄՄԻ-ի համաձայն՝ բժշկական անձնակազմը, հաստատությունները և փոխադրամիջոցները պետք է հարգված և պաշտպանված լինեն բոլոր հանգամանքներում: Գրավող տերությունը պետք է ապահովի և պահպանի բժշկական և հիվանդանոցային հաստատությունները ու ծառայությունները, հանրային առողջապահությունը և հիգիենան գրավյալ տարածքներում: Բացի այդ, ՄՄԻ-ն ընձեռում է հիվանդանոցային գոտիներ հիմնելու հնարավորություն, որոնք կարող են կիրառվել ներկայիս ճգնաժամին արձագանքելու նպատակով:

Ընդհանուր հոդված 3 ԺԿ I-IV; հոդվածներ 19, 23-26 և 35 ԺԿ I; հոդված 36 ԺԿ II; հոդվածներ 14(1), 15, 18, 20-21 և 56 ԺԿ IV; հոդվածներ 12, 15-16 և 21 ԼԱ I; Հոդվածներ 10 և 11 ԼԱ II; Կանոններ 25, 26, 28, 29 և 35 ԿԽՄԿ Սովորույթային ՄՄԻ (ՄՄՄԻ) հետազոտություն:

Ջուր



Ջրամատակարարման ապահովումը կենսական նշանակություն ունի ներկայիս ճգնաժամի պայմաններում: Ձինված հակամարտության պայմաններում ջրամատակարարման ենթակառուցվածքներից շատերը վնասվում կան ոչնչացվում են տարիներ ի վեր շարունակվող ռազմական գործողությունների հետևանքով: Դրանց գործունեության որևէ խաթարում

նշանակում է, որ քաղաքացիական անձինք այլևս չեն կարողանա իրականացնել այնպիսի տարրական կանխարգելիչ միջոցներ, ինչպիսին է՝ ձեռքերը հաճախակի լվանալը, ինչը կարող է հանգեցնել վարակի հետագա տարածմանը: ՄՄԻ-ն որոշակիորեն արգելում է քաղաքացիական բնակչության գոյության համար անփոխարինելի օբյեկտների, ներառյալ՝ խմելու ջրի ենթակառուցվածքների և պաշարների վրա հարձակվելը, ոչնչացնելը, հեռացնելը կամ շարքից հանելը: Ավելին՝ ռազմական գործողությունների իրականացման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի՝ խնայելու այնպիսի քաղաքացիական օբյեկտներ, ինչպիսիք են՝ ջրամատակարարման ցանցերը և խողովակաշարերը:




Մարդասիրական օգնություն



Զինված հակամարտություններից տուժած երկրներին մարդասիրական օգնության տրամադրումը կենսական նշանակություն ունի շարունակական ճգնաժամի պայմաններում մարդկային կյանքեր փրկելու համար: ՄՄԻ-ի համաձայն՝ զինված հակամարտության յուրաքանչյուր կողմ կրում է իր վերահսկողության տակ գտնվող բնակչության կենսական կարիքները հոգալու առաջնային պատասխանատվությունը: Անկողմնակալ մարդասիրական կազմակերպությունները, այդ թվում՝ ԿԽՄԿ-ն, իրավասու են իրենց ծառայությունները առաջարկել հակամարտության կողմերին: Համապատասխան մարմինների հետ մարդասիրական օգնության գործողությունների պլանը համաձայնեցնելուց հետո զինված հակամարտության կողմերը և երրորդ երկրները պետք է թույլատրեն և աջակցեն իրենց վերահսկման իրավունքին ենթակա մարդասիրական օգնության արագ ու անխոչընդոտ անցկացմանը (օրինակ՝ համապատասխանեցնելով ճգնաժամով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումները՝ թույլատրելու մարդասիրական ապրանքների և ծառայությունների հասանելիությունը տուժածներին):

Ընդհանուր հողվածներ 3 և 9/9/10 ԺԿ I-IV; Հողվածներ 70 և 71 ԼԱ I; Հողված 18(2) ԼԱ II; կանոններ 55-56 ԿԽՄԿ ՍՍՄԻ հետազոտություն:

Հատուկ ռիսկի խմբի անձինք



Բնակչության որոշակի խմբեր, օրինակ՝ տարեցները, թուլացած իմունային համակարգ կամ քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անձինք, կորոնավիրուսով վարակվելու դեպքում հետագա բարդությունների տեսանկյունից ռիսկային գոտում են գտնվում: Մյուսները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք, կարող են մի շարք (օրինակ՝ հաղորդակցման և ֆիզիկական) խնդիրների բախվել՝ անհրաժեշտ առողջապահական ծառայությունների հասանելիության և կանխարգելիչ միջոցների իրականացման առումով (օրինակ՝ սոցիալական հեռավորություն պահպանելը կարող է անհնարին լինել առօրյա գործողություններում այլոց աջակցության կարիքն ունեցող անձանց համար): ՄՄԻ-ն պահանջում է, որ հակամարտության կողմերը հարգեն և պաշտպանեն վիրավոր ու հիվանդ անձանց, ինչպես նաև ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ որոնելու, տեղափոխելու և տարհանելու նրանց առանց խտրականության, անհապաղ և առաջին իսկ հնարավորության դեպքում: Նրանք պետք է անհապաղ ստանան իրենց առողջական վիճակին համապատասխան ու հնարավորինս լիարժեք հասանելի բուժօգնություն և խնամք՝ չենթարկվելով որևէ խտրականության, եթե այն չի բխում բժշկական անհրաժեշտությունից: Բացի այդ՝ ՄՄԻ դրույթները հատուկ հարգանք և պաշտպանություն են տրամադրում զինված հակամարտությունից տուժած տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց:

Ընդհանուր հոդված 3 ԺԿ I-IV; հոդվածներ 12 և 15 ԺԿ I; Հոդված 16 ԺԿ IV; հոդված 10 ԼՍ I; հոդված 7 ԼՍ II; կանոններ 109, 110 և 138 ԿԽՄԿ ՄՄՄԻ հետազոտություն:

Ազատագրված անձինք



Ազատագրված վայրերը, որոնք հաճախ գերբնակեցված են և չունեն հիգիենայի և օդափոխության բավարար պայմաններ, լուրջ խնդիր են վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ կորոնավիրուսի կանխարգելման և տարածման սահմանափակման հարցում: ՄՄԻ համաձայն՝ ազատագրված անձանց առողջությունը և հիգիենան պետք է երաշխավորվեն, իսկ հիվանդ ազատագրված անձինք պետք է ստանան իրենց առողջական վիճակին համապատասխան բուժօգնություն և խնամք: Ներկայիս իրավիճակում հիվանդության տարածումը կանխարգելելու նպատակով ազատագրված վայրեր ընդունվող նոր անձինք պետք է կորոնավիրուսի ախտորոշիչ թեստ անցնեն, մինչդեռ հիգիենայի պահպանման միջոցները պետք է խստացվեն (օրինակ՝ լվացարաններ տեղադրելու, օձառ կամ լվացվելու այլ միջոցներ տրամադրելու, ինչպես նաև մեկուսացման հիվանդասենյակներ ստեղծելու միջոցով):

Հոդվածներ 22(1), 23(1), 29-31 ԺԿ III; հոդվածներ 83(1), 85(1), 91-92 ԺԿ IV; հոդվածներ 5(1)(b) և 5(2)(c) ԼՍ II; կանոններ 118 և 121 ԿԽՄԿ ՄՄՄԻ հետազոտություն:

Ներքին տեղահանված անձինք, միգրանտներ, ապաստան հայցողներ և փախստականներ



Ներքին տեղահանված անձինք, միգրանտները, ապաստան հայցողներն ու փախստականները հատկապես խոցելի են կորոնավիրուսի բռնկման ժամանակ՝ հաշվի առնելով նրանց՝ հաճախ անբավարար կենսապայմանները և հիմնական, այդ թվում՝ առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիությունը: Տեղահանված քաղաքացիական անձինք ապաստանի, առողջապահական և հիգիենայի ծառայությունների, անվտանգության և սննդի իրավունք ունեն: Ճամբարներում կորոնավիրուսի բռնկման ժամանակ մարդիկ կարող են ձգտել տեղափոխվել ավելի ապահով վայր, դրան ի պատասխան՝ տեղացի բնակչությունը և/կամ իշխանությունները կարող են ստիպողաբար սահմանափակել նրանց տեղաշարժը, այդ թվում՝ վերածելով ճամբարները մեկուսացված ազատագրված կենտրոնների: ՄՄԻ-ն պաշտպանում է բոլոր քաղաքացիական անձանց զինված հակամարտությունների ազդեցություններից և կամայական ազատագրվումից՝ սահմանելով առողջապահական ծառայությունների անխտրական հասանելիություն:

Քաղաքացիական բնակչությանը վերաբերող բոլոր ընդհանուր կանոնները, հատուկ կանոններ, այդ թվում՝ հոդվածներ 35, 44, 45(4), 49, 70(2), 147 ԺԿ IV; հոդված 73 ԼՍ I; հոդված 17 ԼՍ II; կանոններ 105, 129 և 131 ԿԽՄԿ ՄՄՄԻ հետազոտություն:

Երեխաներ և կրթություն



Շատ դպրոցներ ժամանակավորապես փակվել են՝ կանխելու կորոնավիրուսի հետագա տարածումը: Չնայած որոշումը հիմնավոր է որպես կանխարգելիչ միջոցառում, այն վտանգում է կրթության շարունակականությունը հատկապես այն համատեքստերում, որտեղ այն առանց այդ էլ խաթարված էր ռազմական գործողությունների հետևանքով: Կրթական գործընթացի խաթարումը երկարաժամկետ հետևանքներ է ունենում, այդ պատճառով կարևոր է ապահովել դրա շարունակականությունը ճգնաժամի պայմաններում: ՄՄԻ-ն սահմանում է կանոններ, ըստ որոնց՝ հակամարտության կողմերը պետք է աջակցեն կրթության հասանելիության գործընթացին, մինչդեռ պետությունը պետք է հատուկ հարգանք ու պաշտպանություն ապահովի կրթության հասանելիության նկատմամբ, որի իրավունքը վերապահված է երեխաներին սովորության իրավունքով: Հարկ է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ կրթության շարունակականությունը և երեխաների տնից ուսումնասիրությունը ապահովելու ուղղությամբ:

Հոդվածներ 13, 24, 50(1), 94, 108 և 142 ԺԿ IV; հոդված 4(3)(a) ԼՍ II; կանոն 135 ԿԽՄԿ ՄՄԻԻ հետազոտություն:

Պատժամիջոցների ռեժիմներ և այլ սահմանափակող միջոցներ



Կորոնավիրուսով պայմանավորված ներկայիս ճգնաժամը պահանջում է զգալի մարդասիրական ռեսուրսների մոբիլիզացում, որոնք հաճախ առկա չեն զինված հակամարտությունից տուժած երկրներում: Ներկայումս կիրառվող պատժամիջոցները և այլ սահմանափակող միջոցները կարող են խաթարել մարդասիրական կազմակերպությունների աշխատանքը այդ վայրերում՝ ի վնաս ամենախոցելիների: Պատժամիջոցների ռեժիմները և այլ սահմանափակող միջոցները, որոնք խաթարում են անկողմնակալ մարդասիրական կազմակերպությունների, այդ թվում՝ ԿԽՄԿ-ի բացառապես մարդասիրական գործունեությունը, սկզբունքորեն հակասում են ՄՄԻ-ի նորմերին և պահանջներին: Նման միջոցներ սահմանող պետությունները և միջազգային կազմակերպությունները պետք է ապահովեն դրանց համապատասխանությունը ՄՄԻ-ին՝ բացառելու կորոնավիրուսի ճգնաժամին մարդասիրական արձագանքի վրա դրանց բացասական ազդեցությունը: Պետք է մշակվեն բացասական ազդեցության նվազեցման արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ անկողմնակալ մարդասիրական կազմակերպությունների գործունեության վրա տարածվող բացառություններ:

Ընդհանուր հոդվածներ 3 և 9/9/10 GC I-IV; հոդվածներ 70 և 71 ԼՍ I; հոդված 18(2) ԼՍ II; կանոններ 31, 32, 55-56 և 109-110 ԿԽՄԿ ՄՄԻԻ հետազոտություն: